ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԱՊՐԻԼԻ 2020թվականի N 128

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյուլագարակ համայնքի բնակիչ Լենա Գոքորյանի կողմից ներկայացված դիմում-խնդրանքը՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0041-0023 ծածկագրի հողամասում ինքնակամ կառույցների օրինականացնելու վերաբերյալ, 08.12.2016 թ. N 08122016-06-0017 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» Ա/Ձ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով ՝որոշում եմ.

1. Օրինականացնել Լենա Գոքորյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.0094 հա հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տան 47.27 քմ մակերեսով 1-ին հարկը, բնակելի տան 49.89 քմ մակերեսով 2-րդ հարկը և 1.13 քմ մակերեսով աստիճանավանդակը:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 47.27 քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 49.89 քմ մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի և 1.13 քմ մակերեսով աստիճանավանդակի համար 54060 /հիսուն չորս հազար վաթսուն/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճարի չափը կազմում է՝ 54060 /հիսուն չորս հազար վաթսուն/ ՀՀ դրամ, որը վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255000078 հաշվեհամարին: Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարվելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020թ. 04 22
գ.Գյուլագարակ